Քաղվածք
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2017 թվականի
սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/1 որոշման
հավելվածից

VII. ՈՒՆԿՆԴՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

20. **Ունկնդիրն** իրավունք ունի՝
    1) օգտվել **Ակադեմիայի** գրադարանից, լսարաններից, հյուրանոցից (հյուրանոցից և գրադարանից օգտվելու ընթացակարգերը սահմանվում են **Ռեկտորի** հրամաններով).
    2) մասնակցել **Ակադեմիայի** գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը և ներկայացնել առաջարկություններ.
    3) սահմանված պահանջներին համապատասխան՝ մասնակցել **Ակադեմիայում** անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին, մարզամշակութային միջոցառումներին, թղթակցել «Բանբեր արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսին.
    4) ստանալ ուսումնական գործընթացին վերաբերող լիարժեք տեղեկատվություն.
    5) ծանոթանալ **Ակադեմիայի**՝ իրեն վերաբերող անհատական և ներքին իրավական ակտերին, բողոքարկել այդ ակտերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:
21. **Ունկնդիրը** պարտավոր է՝
    1) կատարել դասախոսների՝ իրենց իրավասության սահմաններում տրված հանձնարարությունները.
    2) պահպանել էթիկայի կանոնները.
    3) կատարել **Ռեկտորի** և **Աշխատողների** օրինական հրահանգները, ցուցումները, որոշումներն ու հանձնարարությունները.
    4) պահպանել **Ակադեմիայի** կանոնադրության, **Կանոնների** և այլ իրավական ակտերի պահանջները:
22. **Ունկնդրի** վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ, իրենց լիազորությունների սահմաններում, հսկողություն են իրականացնում **Ակադեմիայի** կառավարման խորհրդի անդամները, **Ռեկտորը**, **Ակադեմիայի** պրոռեկտորները, **Աշխատակազմի ղեկավարը, Ակադեմիայի** հեռաուսուցման և ՏՏ դեպարտամենտի ղեկավարը և **Աշխատողները**:
23. **Ունկնդրի** վարքագծի կանոնների 22-րդ կետում նշված անձինք, **Կանոնների** պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս, իրավասու են ողջամիտ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու այդ կանոնների որևէ կետի խախտումը:
24. **Ունկնդրի** վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ ծանուցումները կարող են կատարվել էլեկտրոնային եղանակով՝ **Ունկնդրի** էլեկտրոնային հասցեին ուղարկելու կամ **Ակադեմիայի** կայքէջում տեղադրելու միջոցով: